

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«-----» ----- 2014թ. N --- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 971-Ն ՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 905-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի ու Լոռու մարզերի համայնքներում 2014 թվականին կարկտահարության պատճառած վնասները հնարավորինս մեղմելու և հողօգտագործողներին օժանդակելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, Լոռու մարզում մայիսի 24-ին և հուլիսի 8-ին կարկտահարված համայնքների ցուցակները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» N 971-Ն որոշման հավելվածում «2012 թվական» բաժնի 8-րդ պարբերությունում «պայմանով» բառից հետո և «2013 թվական» բաժնի 7-րդ պարբերությունում «փոխանցումը» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, Լոռու մարզում մայիսի 24-ին և հուլիսի 8-ին կարկտահարությունից տուժած, աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու ստացած հողօգտագործողներից» բառերը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության մարզերին հատկացվող աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի բաշխացուցակը

հաստատելու, տեղական սերմարտադրողներից էլիտային և առաջին վերարտադրության սերմացուների ձեռքբերման գործընթացը կազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 971-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 905-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում «հաշվին» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, Լոռու մարզում մայիսի 24-ին և հուլիսի 8-ին կարկտահարությունից տուժած, աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու ստացած հողօգտագործողներից» բառերը:

4. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին ու Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզպետներին՝ 2015 թվականի հուլիս ամսին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման հավելվածով հաստատված ցուցակներում ընդգրկված համայնքների 2013 և 2014 թվականին աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու ստացած հողօգտագործողների կողմից հետ վերադարձման ենթակա գումարների հավաքագրման վերաբերյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

«Հ կառավարության 2014 թվականի

հուլիսի-ի N Ն որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ Ն Ե Ր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, Լոռու մարզում մայիսի 24-ին և հուլիսի 8-ին կարկտահարված համայնքների

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ											
h/h	Համայնքը	Հացահատիկ		Կարտոֆիլ		Բանջարեղեն		2013թ. հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու		2014թ. աշնանացան ցորենու առաջին վերարտադրության սերմացուի համար ներկայացված հայտ	
		վնասված տարածքը /հա/	վնասվածության չափը /%/	վնասված տարածքը /հա/	վնասվածության չափը /%/	վնասված տարածքը /հա/	վնասվածության չափը /%/	քանակը /տոննա/	տուժած հողօգտագործողների թիվը	քանակը /տոննա/	տուժած հողօգտագործողների թիվը
1	Գեղք	160	70-100	43.3	30-50	21.17	30-50	47.1	67	36.25	58
2	Ղարիբջանյան	152	50-70	96.1	30-50	22.22	30-50	0	0	20	65
3	Ախուրիկ	380	70-100	58	30-50	44	30-50	4.15	8	57.3	211
4	Առափի	100	50	30	30-50	20	30-50	8.3	7	1.4	4
5	Ազատան	1050	50-70	349	30-50	75	30-50	70.9	135	61	112
6	Բենիամին	145	50-70	77	30-50	15	30-50	12	27	5	10

7	Այգաբաց	550.84	50-70	52	30-50	20	30-50	45	80	53.8	139
8	Արևիկ	330	50-70	58	30-50	-	-	20	14	46.9	115
9	Բասեն	600	60-100	16	30-50	-	-	28.1	57	50	82
10	Ջրառատ	680	60-100	-	30-50	-	-	22.5	54	30.4	57
11	Լուսակերտ	90	50	12	30-50	4	30-50	0	0	0	0
12	Հովտաշեն	230	70-100	10	30-50	5	30-50	0	0	24	87
13	Նոր Կյանք	330	60-70	25	30-50	10	30-50	17.7	21	30	107
14	Սարատակ	470	50-70	50	30-50	30	30-50	21.7	33	70	82
15	Վարդաքար	510	70-100	45	30-50	13	30-50	9	10	20	50
16	Մեղրաշեն	830	70-100	40	30-50	6	30-50	50	75	151.6	227
17	Անուշավան	200	70-100	6	30-50	8	30-50	0	0	33.35	120
18	Փանիկ	715	70-100	72	30-50	30	30-50	5	14	100	715
19	Գեղանիստ	520	70-100	10	30-50	4	30-50	0	0	51	244
20	Գետափ	80.24	50-70	1.49	30-50	-	-	5	7	20.5	72
21	Սպանդարյան	90	50-70	20	30-50	20	30-50	0	0	18	42
22	Գուսանազյուղ	102.74	50	0.94	30-50	0.56	30-50	30	20	30	58
23	Ոսկեհասկ	228.02	50-70	3.16	30-50	4.8	30-50	2.1	3	15	32
24	Երազգավորս	40	50-70	3	30-50	5	30-50	25.25	4	0	0
25	Հայրենյաց	518.3	70-100	-	30-50	-	-	0.6	1	60	133
26	Հայկասար	390	70-100	4.7	30-50	-	-	19.2	28	42.2	46

27	Տուֆաշեն	189.74	60-80	-	30-50	-	-	15	37	35	115
28	Զորակապ	94.8	40-70	13.07	30-50	-	-	36.4	27	38.7	167
29	Մարալիկ	550	60-80	20	30-50	-		28.9	20	30	42
30	Հառիճ	155.85	30-60	24.4	30-50	4.4	30-50	0	0	8.62	89
31	Հոռոմ	216	50	15	30-50	5	30-50	22	24	25	120
Ընդամենը		10698.53	-	1155.16	-	367.15	-	545.9	1546	1165.02	3401

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ

h/h	Համայնքը	Հացահատիկ		Կարտոֆիլ		2013թ. հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու		2014թ. աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի համար ներկայացված հայտ	
		վնասված տարածքը /հա	վնասվածության չափը /%/	վնասված տարածքը /հա	վնասվածության չափը /%/	քանակը /տոննա/	տուժած հողօգտագործողների թիվը	քանակը /տոննա/	տուժած հողօգտագործողների թիվը
1	Ամրակից	135.0	75-85	49.0	40-70	12.0	17	5.0	10
2	Լեջան	80.0	60	40.0	30	-	-	-	-
3	Ագարակ	75.0	60	40.0	30	-	-	-	-
4	Մեծավան	30.0	80	40.0	30	-	-	-	-
5	Այգեհատ	52.0	40	14.0	30	-	-	-	-
6	Արևածագ	125.0	45	102.0	25	11.0	11	4.0	7

7	Ծաթեր	45.0	40	40.0	25	-	-	-	-
8	Դսեղ	20.0	20	2.0	20	13.05	23	-	-
9	Օձուն	90.0	20	20.0	20	6.5	20	4.0	11
10	Մղարթ	65.0	45	26.0	30	4.0	13	5.0	8
11	Ձորամուտ	10.0	70	12.0	30	-	-	-	-
12	Գարգառ	96.02	40-80	33.99	40-70	6.2	7	4.0	6
13	Գյուլագարակ	255.03	80-90	43.1	60-80	11.0	28	7	16
14	Հաբարձի	64.47	60-100	35.72	60-80	4.55	15	2.0	7
15	Վարդաբլուր	260.34	50-80	87.32	40-70	14.86	36	10.0	27
Ընդամենը		1402.86		585.13		83.16	170	41.0	92

Ընդամենը ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում վնասվել է 14208,83 հա, որից հացահատիկ՝ 12101,39 հա, կարտոֆիլ՝ 1740,29 հա, բանջարեղեն՝ 367,15 հա:

Ընդամենը 2013 թվականին ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում սերմացու ստացած և կարկտահարությունից տուժած հողօգտագործողների թիվը կազմում է 1716, որոնք ստացել են 629,06 տոննա սերմացու՝ 100 649 600 դրամ արժեքով:

Ընդամենը 2014 թվականին ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում սերմացուի հայտ ներկայացրած և կարկտահարությունից տուժած հողօգտագործողների թիվը կազմում է 3493, որոնք ներկայացրել են 1206,02 տոննա սերմացուի հայտ՝ 192 963 200 դրամ արժեքով:

Ընդամենը 2013 և 2014 թվականներին 1835,08 տոննա սերմացու՝ 293 612 800 դրամ արժեքով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 971-Ն ՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 905-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1.	Անհրաժեշտությունը
	<p>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, Լոռու մարզում մայիսի 24-ին և հուլիսի 8-ին տեղացած ուժգին կարկտահարություններից տուժել են ՀՀ Շիրակի մարզի 31 և ՀՀ Լոռու մարզի 15 համայնքներ: Կարկտահարությունից տուժած համայնքներում կան հողօգտագործողներ, որոնք 2013թ. մարզպետարանից ստացել են աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ 2014թ. բերքահավաքից հետո ստացած յուրաքանչյուր կիլոգրամի դիմաց 1:2 փոխհարաբերությամբ 80 դրամ (160 դրամ) հետ վերադարձնելու պայմանով:</p> <p>Հաշվի առնելով կարկտահարության պատճառած մեծ վնասները, որի արդյունքում հողօգտագործողները հայտնվել են ծանր կացության մեջ՝ անհրաժեշտություն է առաջացել վերը նշված հողօգտագործողների գումարների հետ վերադարձը հետաձգելու:</p> <p>Նախագծով առաջարկվում է 2013թ. մարզպետարանից աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու ստացած և կարկտահարությունից տուժած հողօգտագործողների կողմից գումարների հետ վերադարձման հարցը հետաձգել և այդ հարցի քննարկմանը անդրադառնալ 2015 թվականի հուլիս ամսին:</p> <p>2014 թվականին ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի կարկտահարությունից տուժած հողօգտագործողների կողմից ներկայացվել է 1206,02 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի պահանջարկ, որի դիմաց հետ վերադարձման ենթակա գումարների հարցը նույնպես առաջարկվում է քննարկել 2015թ. հուլիս ամսին:</p>
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում 2014 թվականի հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, Լոռու մարզում մայիսի 24-ին և հուլիսի 8-ին տեղացած ուժգին կարկտահարություններից տուժել են ՀՀ Շիրակի մարզի 31 և</p>

	<p>«« Լոռու մարզի 15 համայնքներ, որի արդյունքում մեծ քանակությամբ հողօգտագործողներ հայտնվել են ծանր կացության մեջ:</p>
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	<p>«« մարզերում բնական աղետներից տուժած հողօգտագործողներին աջակցություն ցուցաբերելու նպատակով կառավարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ հողի հարկի ամբողջական և ջրի վարձի մասնակի փոխհատուցում, գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի սերմացուների տրամադրում և այլն:</p>
4.	Կարգավորման նպատակը և բնույթը
	<p>Նախագծով առաջարկվում է կարկտահարությունից տուժած հողօգտագործողներին 2013 թվականին հատկացված և 2014 թվականին հատկացվող աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների դիմաց հետ վերադարձման ենթակա գումարների հավաքագրման հարցը քննարկել 2015 թվականի հուլիս ամսին:</p>
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	<p>«« տարածքային կառավարման նախարարություն, «« գյուղատնտեսության նախարարություն, «« Շիրակի և Լոռու մարզպետարաններ:</p>
6.	Ակնկալվող արդյունքը
	<p>Աջակցություն կարկտահարությունից տուժած հողօգտագործողներին:</p>
7.	Այլ տեղեկություններ

ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ	
1.	<p>Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը</p>
	<p>Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների կատարելու անհրաժեշտություն չկա:</p>
2.	<p>Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ</p>

	համապատասխանությունը
	Նախագծի ընդունման կապակցությամբ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների չկան:
7.	Այլ տեղեկություններ
ՏԵՂԵԿԱՆՔ	
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	
1.	Հասարակությանը նախագծի մասին իրազեկումը
	Նախագծի մասին հասարակությանը չի իրազեկվել:
2.	Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին
	Նախագծմանը և/կամ քննարկումներին հասարակության մասնակցություն չի ունեցել
7.	Այլ տեղեկություններ